



ԱՐԾՈՒԻ

ՎԱՍԳՈՒԲԱՆՆ

ԹՅՈՒՅԵԼ ԶԱՅՐԵՆԵՍԻՐ ԹԵՒՕՐ
ՅԵՐԺՐՈՒՆԻ ՄԵՆԱՍԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ

ԽՄԲԱԳԻՐ ԶԱՅՐԵՆԵՍԻՐ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԱԳԱՅՆ ԽՐԻՍՏԵՆ

ՀԱՏՈՐ ԵՐՈՐԵ

ՓԵՏՐՈՒՆԸ 1859 . ԹԻ . 2 .

ՎԱՆՏՈՍԳ

Ի ՏՊԱՐԱՆ ՎԱՍԳՈՒԲԱՆՆ ԱՐԾՈՒՅՆ
ԴՎԱՐԱԳ



1874

THE UNIVERSITY OF

CHICAGO

LIBRARY

1874

CHICAGO



ԵՐԾՈՒՒ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ
ՈՐ ԻՎԱՆՏՈՍՊ

Դ • ՀԱՏՈՐ 1859 ՓԵՏՐՈՒԱՐ

ԱՎԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ՀԱՐՅՆ

ՏՈՂՀԱՆ ՄԱՆՆԱԿՈՒՆԻ ԿԱՐԳԱՒՈՐԻՉ ԿԱՐԳԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԵՑՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Յետ Տ. Բրիտանիոյ Կաթողիկոսի, որ զօրեղ ախոյեան կացեալ բնաջինջ երարձ եւ հալածական տարաւ ի նահմանացն հայրենւոյ զպիղծ աղանդն Նեստորական զսերմանեալն ի չարէն բարձու մայ, կացուցին յաթու Հայ

բապետական իմաստաւորն Տ. Յովհանն Մանգ աղօթնի , որ
էր յաշակեալաց Եօթնալոյս Թարգմանչացն պարոյ . Այլ
հրեշտականման պայծառ առաքելութեամբ եւ արքայ
Թեամբ համբաւեալ . եւ ուսումնական՝ որոյ ոչ գտանելու
համանման , 75 ամեայ խորին ծերութեամբ պարարտացեալ
եւ ՚ի տանն Աստուծոյ իբրեւ գարնաւեմի մշտադալար ՚ի
գնացս հոգւոյն վտակաց տնկեալ :

Թուել հայրենեօք էր սա ՚ի գաւառէն Արշամուշեայ
՚ի գեղջէն Ծախնոսայ . որ ՚ի կոջէն յաժտու լուսաւորչա-
կան՝ գտաղանդ պատուիրանին Աստուծոյ անհապաղ ՚ի գործ
արկեալ՝ կանոնել եւ կարգադրել գամենայն սոժաւ գաւ-
թով Զանաղիր եղիւ :

Դախ առաջին գլխովն Վահան Մարմիկոնեան զթուրա-
ցեսնն ՚ի հաւատս՝ կրկն ընկալաւ յեկեղեցի Աստուծոյ . որոյ
Թախանձադին եւ զգլխական ողբասեօք ինքն խի գիշեալ
էր լինել Ասթորիկոս : Եւ սաքս ճեւղարկել եղեկեայա-
կան իրս ՚ի կանոնել . շարադրեայ բազում եւ ազգի ազգի
սրտաշարժ ջերմեւանդտիան աղօթս եւ քարոզս . որպէս
ցարդ ՚ի սուրբ եկեղեցւոջ վտառս որեմբ զԱստուած . որ-
պէս զտրթուցեալք , զքէն գահանամբն եւ զայլս . վկայե-
այսմ եւ Յովհանն պատմագիր Ասթորիկոս յաւելն :

« Եւ զինի նորա յաջորդէ զաթու հայրապետութեան
« Յովհանն Մանգաղօնի , որ սա լցեայ խի էր ամենայն
« հոգեւոր հանձարով , եւ կարգս յորինեալ ճոխացուցա-
« նէ սրայտաւապէս՝ զամենայն աղօթական ժամակարգու-
« Թիւնս եկեղեցւոյ սրբոյ . եւ յարդարէ եւս ճառս ըզ-
« րաշարժուցիչս քրտաւորական կենցաղոյս . որ բերէ զոգ-
« ւոցն փրկութիւն :

Չապրաղիք վայելչութեամբ եւ յարմարաւոր կարգաւ

յարդարէ զձխարանն բոլոր խորհրդոց սուրբ եկեղեցւոյ ,
 (այս է ՄԱՇՏՈՑ անուանեալ զիրքն) . ընդ որ եւ պա-
 տարադամատոյց խՈՐՀՐԴԱՏԵՏՐՆ . հոգեւորական զմայ-
 լեցուցիչ ջերմեռանդ խնդրուածոց յաճախութեամբ : Հա-
 րադրէ եւս յոգնաթիւ ճառս խորհրդաւոր եւ ողջամիտ
 վարդապետութեամբ : Աորս ատի եւ սքանչելի շտրականն
 այն Հռիփսիմեանց . որ այբբենական կարգաւ սկսանի ասե-
 լով ,

« Անտիպքն բանն Աստուած , որ վասն մեր հաբեր
 « մահու :

« Ի սահարով զգատակնիք անիծիցն առ 'ի մէնջ , եւ այլն :

Աորին եկեղեցաշէն Աստուածպաշտութեան հանգէս ա-
 ռաւել փայլի 'ի հրեշտակական տմբծութեամբ սրբանեալ
 փորս իւր . եւ մանուանդ 'ի սքանչելի տաեմաբանական
 համոզկեր բանս որ 'ի յորդոր սիրոյ միաբանութեան . ու-
 րովք 'ի ձեռն ստիաւ ոմանց մեծամեծս գործել ետ . այն-
 չափ՝ մինչեւ տպչութեամբ զարմանող ահեղսցոյ առեմնին
 Պարոյց :

Հոգեւորանչ յորդորակ քաջալեր սորին՝ վառեաց յատ-
 կապէս զսիրտ քաջին Վահանայ մամիկոնէի եւ նահատա-
 կին Սահակայ ասպետի . որք անվնհեր արիութեամբ եղին
 զանձինս իւրեանց 'ի վերայ ողջամիտ հաւատոյս եւ չնաշ-
 խորհիկ հայրենւոյ : Զարմանաւոր առեմնաբանութեան
 սորին մի միայն գործ էր , որով 'ի վերքան զմիտս քաջալերեալ
 սրտապինդ լինէին լուսածին որդիք մօրս սրբոյ , որ եւ յետ
 բաղում քրտանց եւ հայրենավաստակ տքնութեանց՝ անձն-
 դիւր զնոսին տրարեալ՝ սիրոյ արտասուս տայր հեղուլ յեր-
 կիր : Որպէս 'ի միում նուագի մինչ քաջազն Վահան մա-
 միկոնեան մեծաւ յայլթանափաւ 'ի Պարոյցն առեմնէ պատ-

կեալ Թագաւորական շքով 'ի Դպին մտանէր՝ քաղաքն ա-
մենայն զթինդ առեալ եւ ձայնս ուրախականս հնչեցու-
ցեալ բարեպաշտական տօնախմբութեամբ յեկեղեցի Աս-
տուծոյ դիմեցին՝ Երանելիս այս ետ եղանակել զվարժսուն
եւ եօթերորդ քսան եւ վեցերորդ սաղմուն « Յեկեղե-
ցիս օրհնեցէք զԱստուած եւ զտէր յապքերացն խորայե-
լի » ։ Եւ տ որոյ 'ի ցնծութիւն մեծի տօնին զհոգիա-
բուղիս բերանն իւր բացեալ՝ առեւնարանեաց վսեմ բեմ
բախստութիւնս, որ է ։

« Բազում կերպարանք եւ ազգի ազգի ցուցակութեամբ
« բոլոր փրկիչն մեր եւ տէր Յիսուս Քրիստոս զիւրոյ զալս-
« տեանն եւ մարդանալոյն 'ի սուրբ եւ յԱստուածածին կու-
« սէն ։ Ժրագրեալ յայտարերէր մեզ զօրինակն 'ի սկզբա-
« նէ ։ Դորենեաւն զիրանելի կոյսն ։ Եգիպտական նշա-
« նագործութեամբք՝ զանազատութիւն հրէական օրինա-
« ցըն՝ զենմամբ գառինն զազատութեան թիւնն խորայե-
« լի որոյ ճշմարիտ գառինն զենմամբ փրկելոց էին ամենայն
« արարածքն եւ այլն ։ Ընթերցիլ Ղազարայ Փարպեցւոյ
մատենագրի 312 երեսն ։

Այս առեւնախստութիւն զարմանալի ներգործութիւնս
արար յերկիւղածս Աստուծոյ եւ ըստ նորին Ղազարու ։
« Եղեւ այն օր անյազ խնդութիւն եւ անսպառ ուրա-
« խութիւն Աստուածատէր բարեխրացն ։ Եւ ողջախոր-
« հուրդ մտաց լաւահայեցաց ։ Եւ սուգ թախանձարից
« եւ տրտմութիւն անմխիթար՝ խօթամտացն եւ խարդա-
« խաց ։

Կեցեալ ապա յաթոռ հայրապետական զամօ վնց եւ
լեալ իբր ամուց ութսուն եւ երկուց, խորին ձերութեամբ
վախճանի ։ Որոյ պատուական մարմին մեծաւ յուզարկա-

ևորութեամբ դրեալ հանգընցանի 'ի շիրիմ փառաւոր առ
Շիրակ գաւառաւ 'ի գիւղն Բեռնոս ընդ այլ երանելի
վկայեալ սուրբան :

Ի միտ առ այսպիսի եւ այս չափ էր եկեղեցաշէն
սուրբ եւ երիցս երանեալ Հովնապետիս Տ. Յովհաննու
Մանդակունոյ Աստուածաշտուածեան գործք եւ այս-
պիսեօք եկեղեցւոյ Աստուծոյ տարաւ զհոգ եւ որդւոց
նորին կապեաց զսիրտ 'ի մի յօդ սիրոյ միաբանութեան
'ի Քրիստոս :

Ուրեմն ջերմեռանդ սրտիւ ըստ մեծին Սահակայ աս-
պետի եւ քաջին Վահանայ Մամիկոնէի աղաչեցուք առ
հօտապտոն Քրիստոս յարուցանել եւ մանաւանդ թէ շը-
նորհել յիւրն սիրելի հօտի հովիւ ընտիր եւ ըստ Մանդա-
կունոյն Յովհաննու սիրաշահ, քաղցրաբան, իրաւախորհ եւ
սրբակիր : զի միութիւն ազգիւն անմահացեալ, արեւմուտք
ընդ արեւելս գրկախառն սիրով ողջունեցե. զի 'ի բար-
ձնցն վերնոց տեսեալ զուարթունն Հայոց Տ. Գրիգորիոս
բերկրեցցի նոր ցնծութեամբ ընդ Սահակայ ընդ Մեսրով-
պայ եւ ընդ Ներսիսեանց :

ԲՆԱՆԴԻՍԵՐԱՆ ՀԱՅՐԵՆԱԸՆԵՆ ԵՌԿԻՆԵԼՍՑ

ԱՆՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՇԽԱՏԱԸՆԵՆ ԵՒ

ՊԱՆԾԱԼԻ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ.

Խոստովանողին Սմբատայ Ժառանգին բարեյիշատակ մեծըն Աշոտ, իր Ատուածապարգեւ հանձարոյր եւ իմաստութեամբը՝ մարդկային բռնութեանց եւ չարութեանց զանազան հարուածներովը՝ ազգին հանգստութեան երջանկութեան եւ ազատութեան պաշտպան կէտոյ քաջքայեալ եւ հրօմանեալ գահը վերստին կանգնեց, եւ իր հալքենասէր եւ տաարիւնի վարքովը՝ մեծաց եւ փոքունց ող առարկնութեան եւ հայրենասիրութեան օրինակ եւ դաւաճարակ եղաւ :

Հարձեցան այն հոյակապ եւ պատուական նախարարաց սրտերը՝ տենեալով այս անդուգական սնձին վերջ այն թագաւորակայել ոգնուականութեան ձրգելը եւ շնորհքները ժողովեցան միաբանեցան՝ եւ միակամ միասիրա միախորհուրդ ըլլալով՝ անոր հետ գործակից եւ օգնական եղան ամէն մէկ առաքինի եւ երեւելի գործոց մէջ :

Իհա այս ազնիւ նախարարներն էին որ մոյութեան շատ հախորդութեան տառելութեան մէկ աշքերնին գոցելով՝ Ատուածային սիրոյ զթութեան եւ ողորմութեան դի-

տակ (տիւրպիւն) խղճերնուն աչացը դէմ բռնելով, զօ-
 րաւոր կերպով կալուղացան գիտելու եւ եւ տեսնալու ,
 թէ ինչպէս ընդհանուր ազգին սիրտը այլեւով նեղու-
 թիւն տուող կրակին բոցը՝ Բաբելոնեան հնոցին նման
 մինչեւ յերկինս բարձրացեր է . արտերնին չդիմացաւ այն
 զարհուրելի տեսարանին վերայ նայելու , այնպիսի բոցի մը
 այնպիսի թշուառութեան մը որ՝ ազգը Հայկէն սկսեալ
 մինչեւ Արշակունեաց վերջին թագաւորութիւնը անոր նը-
 մանը տեսած չէր . այնպիսի ազգ մը որ՝ միշտ հզօր յաղ-
 թող եւ պանծալի կերպով կեանք վարելու սովորած էր .
 Եւ երբոր տեսան թէ ազգը այնչափ փառքերէն եւ բա-
 րութիւններէն զրկուելէն զատ՝ բազմաթիւ անպիտան բիւտ
 եւ անմիտ ազգաց բռնաւոր իշխանութեանց տակը անտա-
 նելի չարչարանքներ կը կրէ . եւ գթալով անոր վերայ՝ արթն-
 ցան իրենց աններելի թմբութներէն , եւ մեծխմաստն զԱ-
 շտ ազգին վերայ թագաւոր պահել ուզելով , ամէնէն ա-
 ուջ խնդրեցին իրմէն որ՝ ազգի մը հոյսը բլլարու թագա-
 ւորական իշխանութեանը յանձնառու ըլլայ եւ միանգա-
 մայն խոտուցան իր հրամաններուն եւ կտրգադրութեան
 պր ամենայն սիրով հարստակ եւ հնազանդ ըլլալու , գացին
 խնդրեցին առին ամկրտպետէն այն թագը՝ այն թագա-
 ւորութիւնը որ , իրենց ցեղէն եզող նախնիքը բռնակալ Պոր-
 սից ձեռքը մատներ էին . եւ այն որ ազգին պաշտպան ե-
 լող պանծալի թագը չկորսնցնելու համար մեծին Սահա-
 կայ սրբազնաստուրը հօրն լալճգին աչօք ըրած աղաչանք-
 ները այն կարճամիտ նախարարաց ընդունելի չեղաւ , բայց
 անոնց թողնելը փորձերով եւ բազմատեսակ չարչարանքնե-
 րով , իմացան զգացին սուրբ եւ իմաստուն ծերոյն տու-
 ած խրատներուն եւ խորհաւ ընկերուն զօրութիւնը պօ-

տուականութիւնը եւ զանազան հետեւութիւնները՝ թե-
եւ շատ ուշ :

Ով զարմանալի Աստուածաճաճայ հայրենասիրութեան
եւ արիասրտութեան իշխանաց . որ այնպիսի դիւցազնական
ողով կարողացան ընտրելու իրենց այսպիսի իմաստուն եւ
բազմափորձ նաւապետ մը՝ այն հայրենաշէնն զԱշոտ , որն
որ այն նեղութեանց սոսկալի ալիքներ յարուցանող գերու-
թեան Ովկիանոսին մէջէն . սգատեց ազգը , ու նաւոյն ապահո-
վացուցիչ զօրաւոր խորիստը եղող թնալը աթոռը հաստատեց
Բագարանի ամուր . քաղաքին նաւահանգստին մէջ : Ահա-
ւասիկ հովիւը իր փողը հնչեցնելուն պէս՝ շուտով ժողովե-
ցան այն ցրուեալ ուխտարները իր բարերար հովանիին տակը .
եւ այն քաջասիրտ իշխանաց աջակցութեամբը՝ բուռն զօ-
րութեամբ անվեհեր կերպով իր սահմաններէն ցրուեց բնա-
ջինջ ըրաւ գայլանման գող եւ պատսռող թշնամեաց խու-
մբերը : Եւ անթիւ բարեկարգութեամբ հարստութեամբ
եւ ճոխութեամբ թէ՛ իր արքունիքը եւ թէ՛ ազգը՝ չե-
րստին նորափետուր զարդարեց . եւ այնպիսի իմաստութեամբ
եւ ընտիր կերպով կը կառավարէր ազգը որ , բոլոր օտա-
րազգիք երանի կուտային Հայաստանին . որ այնպիսի թա-
գաւոր ունի : Արդարեւ երկրորդ Վաղարշակ մը ունե-
ցաւ Հայաստան եւ իրաւունք ունիմբ ըսելու թէ՛ հան-
ձարով եւ զօրութեամբ քան զայն պերազանց փայլեցաւ
յաշխարհիս Հայոց . վասն զի առաջնոյն առ ձեռն պատ-
րաստ ունեցած զօրութեամբը եւ ժամանակին յաջող պա-
րագոյններուն միջոցաւ՝ հնարաւոր էին այն ամէն կարգա-
դրութիւնները դիւրութեամբ ի գործ դնելու . բայց
Աշոտ մարդկային ազդին անհնարին երեւցածները՝ նա-
խախնամութեան ապաւինելով՝ ամենայն դժուարութեանց

երկայնմտութեամբ յաղթելով կարող եղաւ հնարաւոր ընելու :

Կատարեցաւ արդարեւ մեր երանելի խորենացիին գուշակութիւնը որ պիտի երաւ Սահակ Բագրատունին ըսելով թէ , « Հայոց ազգին նոր թագաւորութիւն մ'ալ քու ցեղէդ պիտի սկսէ » : Չարմանալի է նախախնամութեան մեր ազգին վերայ ունեցած յատուկ սիրոյ նշանները թէ , ինչպէս որ իր այն սիրելի ազգը Իսրայէլացիք , որոնք Փարսոնի բռնութեանց եւ հարստահարութեանց տակը չորս հարիւր երեսուն տարի նեղութիւն կրելէն ետեւ Աստուած ազատեց Մովսէսի ձեռամբ , ԳԵՄ . ԺԲ . 40 . ահա այսպէս ալ՝ նորս այս Իսրայէլ Աստուծոյ սիրելի ժողովուրդը եղող ազգն Հայոց , մի եւ նոյն թուով չորս հարիւր երեսուն եւ մէկ տարի (1) Պարսից եւ բարբարոս ազգաց չարչարանաց եւ հալածանաց տակ ճնշուելէն ետեւ , Աստուած զթալով ազգին վերայ՝ դարձեալ նորոյս Մովսէսի նոյն Աբրահամու ցեղէն յատմք եկած Աշոտոյ (2) ձեռամբ՝ փրկից ազգը այն անտանելի ճնշման թեւէն : Կատարեց Աստուած առ հայրն Աբրահամ ըրած խոստմունքը , թէ « Թագաւորք ի քէն ելցեն » :

(1) Առաջին թիւէն տարի մը տարբերութիւն ունի , լայց Վանսէլը այս թիւը սխալքն Արշակունեաց թագաւորութեան վերնալին մինչեւ Բագրատունեաց թագաւորութիւնը՝ չորս հարիւր երեսուն եւ չորս տարի կը գնէ :

(2) Խորենացին Բագրատունեաց ցեղին սկզբնաւորութեանը համար կը սէ թէ : Երբոր Բաբելոնացոց Վաբուգոդոնոսոր թագաւորը՝ զերի Բռնէր էր շրջանները , մեր շրջեայ Հայկազուն թագաւորը՝ անոնց երէւ լինելէն , մէկ եղող Շամբաթ անուն շրջան խնդրեց որ իրեն տայ : ու մեծ նրատուով Հայաստանի մեջ բնակեցուց , ուսկից Բագրատունեաց ցեղը յատմք եկաւ : Ա . ԳԼ . 22 .

Դարձեալ այս այսպէս ըլլալուն , աւելի հաստատ ապացոյց մ'ալ

Երդ արեւ՝ Հայրենաշէնն Աշտ գիտէր որ մարդս ընտ-
կանաբար միշտ կը սիրէ Բ-բին՝ օգտալէն ե-կտարէն ը-
ահաւասիկ ասոնցմէ այն երկուքը ունենալով, այսօրէն
ամէն մարդու եւ մտնականոյ իշխանի մը պէտք եղած բա-
րութեանց եւ կատարելութեանց մէջ պակասութիւն մը
շունհեալէն դատ՝ օգտակար ըլլալու համար՝ ալ մտածեց
թէ ինչ կերպով ազգին սիրտը շահելու եւ խերքիմքը սնու-
բարբոթիին սիրելի քնելու առատաձեռնութեան միջոց
կրնայ գտնել. ասոր համար մեր Յոհաննէս կ'ընտելի
երեւելի պտտմիջը կրտէ թէ, « իր ստականները շահի կուտար՝
չէ թէ հարստութիւն գիգելու պատճառաւ, որն որ իշխա-
նաւոր անձանց տնօրէական սխալ մըն է, հապա անող քո-
ղովրդեան սիրտը շահելու համար. եւ ամենէն աւելի այս
առատաձեռնութեամբն էր որ իշխանաց իշխան ըլլալու առ-
աւիճանին հասաւ՝ եւ ետքն ու թագաւոր եղաւ » .
Եզգասէր ընթերցող տես անցամ մը թէ ինչպէս բնական
բնութիւն մըն է եղեր միաբանութիւնը մեր ազգին ոյ,
այն ոգւով մըշտ մեծամեծ բարիքներ ձեռք ձգելու կարող
եղած է. ուրիշն շատ սխալ կարծիք է որ՝ շատերը ան-
միաբանութիւնը անոր իրիւր բնական պակասութիւն մը
ճանչնալով տգիտութեամբ նախապաշարուած են. իր ստոր
գրոյցք զստ պիտի խօսինք .

Տ. Կ. ԳԱԼՓՈՒՅԵԱՆ .

յուսիսեւ ուղիւ լականոց նախնի հրեական անունները ետքէն աստա-
ղարծութեամբ փոխուած անուններուն հետ կրթադատեւ եւ հնչմանց-
ներինն մեկզմէկէ ոչինչ տարբերութիւն մը ունենալուն վերայ դատ-
շութիւն ընելով՝ լուսաւոր ճմարտութիւն մ'ալ կ'աւելցնէ բոկոյ թէ
ոչնայ արարող Բաղադիւս եղած պիտի ըլլայ. Աշտը՝ Ատուկ՝ ալաւ
Վարդիւս եւ Սմբատն ալ Շամբութ. Կ. Գ. 65 .

Դ . ԲՈՒՐԱՅՏԱՆ ԲԱՐՈԱՅՎԱՆ

ԳԱՏՄՈՒԹԻՒՆ

Պատանի ոմն 'ի մեռանել հօր իւրոյ՝ 'ի պատիւ մարմնոյ նորին եւ թաղել ընդ նմին 'ի գերեզմանի թաղում ու կեդէն, արծաթեղէն եւ կերպասեայ ինչսե կարասիս • Յընդգիմանալ բարեկամոյն յայս լգործ , առէ՝ եւ կամաւոր յօժարութեամբ պատրաստ եմ եւ ըղձամ գկեանս իմանգամ նուիրել փոխանակ գերեզմանի նորին , դուք զկուտական ինչս արդեւմբ

Բայց զկնի տակաւուց՝ այն ինչ եւ գանձն 'ի տեսակաւոր մոլութիւնս շատրութեանց • որովք եւ վատնեաց զոր քնի թողեալն էր հայքն իւր, մինչեւ այն կէտ՝ զի հարկեցաւ գնալ եւ բանալ զգերեզման հօրն՝ զի հանցէ անտի՝ զոր միտնգամ թաղեալն էր ընդ նմին առատորտութեամբ

Այլ իբրեւ ետես, թէ ապականեալ եւ ժանդոտեալ էր ամենայն , հաւ 'ի ձեռին զգանկի հօր իւրոյ եւ սկսեաց թշնամանելով ասել . ա թշուառ չորացեալ գլուխ 'ի կենդանութեանդ ինձ ոչ ուսուցեր զինչս պահել, եւ 'ի մեռանելդ , դու անհոգացեալ կաս 'ի պահել . իսկ ինձ գերոյս եւ թշուառիս զի՛նչ լինիցի զԱյս ասել՝ եւ բռնի հարկանէր զչորացեալ գլուխ հօր իւրոյ •

Օհող դու այս քեզ խրատ պիտանի
 Կրթութեամբ սընո զոր ծնար որդի :
 Ճոխութիւնք գանձոյդ՝ որ քեզ չօգտեցին
 Կրուստ արագեն զաւակիդ անձին :
 Թող նմա ժառանգ իրրատուց ամբար
 Ձի ըզ գօնացեալ հազէ 'ի կատար :
 Օ'ն թէ ոչ ընտրես զբան խրատու
 Հէգ քո զաւակիդ դու ես մատնտու :
 Եւ ոսկերեալքդ չորացեալ համակ :
 Անբաւ լուտանաց դընես նշաւակ :

ԱՆՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐՃԻՔԸ :

Կը տեսնամք թէ այն որ ազգ. ազգութիւն ինչ բռել է
 նոր ճանճուպու վերայ է՝ ընկերութեամբ մը ազգային
 գործի մը մէջ մտած, ժամանակը, իր անհատութեանը կամ
 թէ նոյն է գործին յաջողութեամբ յառաջ երթալու
 դիւրին պարագայներուն տեղեակ կամ փորձ չըլլալուն հա-
 մար՝ թէ որ գործը յառաջ չերթայ, կսկսի ազդեցութեամբ
 ազգը եւ ընկերը պախարակել ըսելով թէ, մեր ազգը ան-
 միաբան է գործ մը իր նպատակին չկրնար հասցնել : Ա-
 հաւաստի այսպիսի մարդուն ազգին բնութեան հանգաման-
 քները չքննելով իր կարծիքին վերայ յամառելը՝ նախապա-
 շարմունքէ եւ կամ թէ տկար գաղաղութենէ յառաջ
 կուգայ որ, միաբանութեան գործը անմիաբանութենէն

յառաջ եկած գործերէն որոշելու կարողութիւն չունի ։
 Եւ այտնի է որ բանի մը անձանց կամ բազմութեան մը
 խորհրդոց եւ կամայ համաձայնութեամբ գործ մը յա-
 ռաջ տանելուն միաբանութիւն կրտսի եւ հետեւաբար ըն-
 կերութիւն թէ որ, այն ընկերութիւնը կազմող ազ-
 գը այդ միաբանութիւնը ունեցած չըլլար ինչպէս
 ընկերութիւն կրնար կազմել . ուրեմն ինչպէս որ ըսինք
 գործի մը յառաջ չերթալուն ստոյգ պատճառները չգիտ-
 նալէն՝ կամ թէ ձախորդութեան առթիւ ելող զիպուած-
 ներէն գործը իր նպատակին չհասնի՝ ասոր անմիաբանու-
 թիւն ըսելը անիրաւութիւն եւ անտի կարծիք մըն է ։
 Բարեկարգ ազգերը բազմութիւն ընկերութիւններ կը կազ-
 մեն, թէ որ ձախորդութիւն մը պատահի՝ չէ թէ անմիա-
 բան ենք ըսելով յուսահատութեամբ ընկերութիւնը կը
 ցրուեն, հապա նոյն միաբանութեամբ նորէն ձեռք կը զա-
 րնեն նոյն գործին մինչեւ որ յաջողի, եւ իրենց արգեանցը
 պտուղը արժանապէս կը վայելեն . թէ որ իրենց մէջէն տը-
 գէտ կամ թէ չարաբարոյ մէկը ելնէ ամենուն միտքը հա-
 մոզուած ճշմարտութեան մը դէմ դնելով յաճառի՝ եւ
 կամ թէ նոյն ընկերութիւնը խանգարելու նշան մը ցը-
 ցունէ, շուտով դուրս կը հանեն ընկերութենէն ։ Եւ այտ-
 նի է որ կրակը առանց ծուխի չըլլար, ամէն ազգի եւ ա-
 մէն ժողովուրդի մէջ այնպիսի չար անձեր կը գտնուին ։
 Ուրեմն ժամանակաւ ազգերնուս մէջ երեւցած քանի մը
 մոլի անձանց անմիաբանութեան չար ախտը ընդհանուր
 ազգին վերայ առնելով՝ անոր իբրեւ բնական պակասու-
 թիւն ճանչնալու սխալ կարծիքէն զգուշանալու է ։

Ինչպէս որ բազմութիւն ժողովրդոց միաբանութեամբ
 աշխատութեամբ եւ համբերութեամբը՝ զանազան շէնքերով

դարձերով շինուած քաղաքի մը մէջ չարախորհուրդ մարդ մը կրակ ձգելով բոլոր քաղաքը այրելու ըլլայ, ո՛ր կրնայ այնպիսի յիմարական խորհուրդ մը մտածելով բռնել թէ՛ ընակիչները չար անմիաբանութեամբ մը իրենց քաղաքը այրեցին ։ Անմիաբանութեան դիւական ոգին շահախնդրութեան ռիսկալութեան եւ կամ փառասիրութեան ուժէն յառաջ կուգայ՝ որոնցմով իր խղճին աչքը կը կուրծնէ որ, անկեց ետեւ բոլորովին կը մոռնայ Աստուածն ալ մարդկութիւնն ալ, եւ մարդկային ազգին ժանտախտ մը կը ըլլայ ։ Այսպիսի մարդը որչափ որ իր դժոխային գործը դիւրութեամբ 'ի գործ կրնայ դնել'՝ այնչափ մեծ է իր յանցանքը՝ եւ աշխարհիս մէջ եղած ժառանգէն կոչու Աստուածային պատժով պատուհասուելով դժոխքին ծաշակը առնուլ ։ Ինչպէս որ մեր սուրբն Եղիշէ անօրէն Վահակին համար որդեակեց մարմն ու շան պէս տասկեցաւ կըսէ որ, աշխարհային անտի փառքի մը անօրէնութեամբ թաւանալու ցանկութիւնը՝ այն ամենամեղաւոր ատրիճանին հասուց զինքը ։ Ափսոս որ ազգերնիս այսպիսի անձանց անհոգութեամբ հաւատ կընծայէր, որոնք մեծամեծ թշուառութեանց պատճառ եղան ։ Արդարեւ այսպիսի մարդը՝ մարդկանց առջեւ մարդու կեղծարանք ունեցող ասկտիք գազան եւ Աստուծոյ անիծեալ օձ մըն է, ուսկից ամէն մարդ կը փախչի ։ Բայց միտքանութեան առաջինութիւնը 'ի գործ դնելու համար որչափ որ երկայնմտութեամբ համբերութեամբ եւ աշխատութեամբ կըլլայ, այնչափ ալ անոր յարգը մեծ ըլլալով, ազգերնիս ալ այս ընտիր յատկութիւնը ունենալուն համար այնչափ ալ յարգի է ։

II րեմն Հայկազունը այս առաքինութեան ձիրքով ժառանգել ժամանակ աշխարհաէն եւ ոգւային երեւելի օգտու

կար, գործքեր ըրած ըլլալով, աստիք իրենց միաբանական ու
գոյն մեծամեծ ապագոյցներ ըլլալը քաջ շնորհով հասկցողը,
այն քանի մը եղեռնագործ անձանց անմիաբանութեան ա-
տելութեան չար տխրութիւնը ակտայեալ անհասանելիուն մո-
լութիւնը ընդհանուր ազգին վերայ առնելով պահարակելը՝
ազատութեան ժամանակէն մնացած կարծամիտ եւ նա-
խապաշարեալ անմիտ կարծիքներէն յառաջ եկած ըլլալն
ալ՝ որոշ եւ յայտնի կերպով կը հասկընայ :

Այսինքն զի որ ժողովուրդ մը որ զօրաւոր ազգ մը ա-
ռանց միաբանութեան եւ հանձնարար կարող կրնար ըլլալ
անչափ զանազան բարբարոս ազգաց մէջ՝ չորս անգամ
անպիտի փոփոխութիւններ կանգնելու . ամէն տե-
ղէն եկած հարուածներուն երկար ժամանակներով դիմա-
նադրելու եւ ինքզինքը պաշտպանելու . որ զօրաւոր եւ բարե-
նաւոր բրիտանիայ ազգ մը առանց միաբանութեան եւ
սիրոյ, կռապաշտ եւ անօրէն Պարսից բռնութեանց չարչա-
րանաց եւ հալածանաց դէմ դնելով (մանաւանդ որ թա-
գաւորութիւնն սլ կորսնցուցած էր), կարող էր իր բրիտանի-
ական ուղղափառ կրօնքը արիւն թափելով պաշտպանելու .
թէ որ ազգային պատմութիւնները ծայրէ 'ի ծայր կարող ա-
լիւ ըլլամք, միաբանական ոգին ազգին բնական ըլլալուն հա-
մար՝ արդեօք որչափ ասոնց նման զօրաւոր բազմաթիւ ա-
պագոյցներ ախտի գտնամք :

Եւ այս օրուան օրս երբոր կը տեսնամք ընդհանուր ազգին
մէջ ուսման եւ գիտութեան յառաջագիմութեան վե-
րաբերեալ հիմնադրութիւնները՝ ազգասիրական գործքերը
եւ ազգային օգտակար երեւելի շէնքեր կանգնելին՝ եւ
մէկգմէկու յոգոր եւ օրինակ ըլլալին, չէ՞ որ այս ամէն
բարութիւնները 'ի ակզբունէ հետեւ ազգին բնական եղած

միաբանութեան եւ միանգամայն առատաձեռնութեան ոգիէն՝ յառաջ եկած են այնչափ միաբան եւ այնչափ յառաջագնաց են ազգին բարերարելու մասին՝ մանաւանդ այս ուսումնասիրութեան ժամանակիս մէջ, որուն (ազգին) ինչ վիճակի մէջ ըլլալը չգիտցող օտարազգի մը՝ անոր արդիւնաւոր գործքերը տեսած ժամանակը, հեռուէն հաստատ կը կարծէ թէ՝ նոյն բարութեանց տէր եղողը, անշուշտ թագաւորութիւն ունեցող ազգ մը եղած պիտի ըլլայ կրտսէ :

Ուրեմն քանի որ այս ձիրքը մեր ազգին բնական է, հաստատուն յոյս կրնծայէ որ՝ այս ընտիր խաղաղ եւ քաղաքակրթեալ գալուստ ժամանակը՝ ուսման եւ գիտութեան լոյսը պիտի տարածի ընդհանուր ազգին մէջ, եւ մարդոյս թէ հոգւոյն եւ թէ մարմնոյն բնծայած երջանկութիւնները պիտի վայելէ Աստուծով : Եւ ասկէց ետեւ պէտք է որ ազգին անմիաբան է ըսելը նախադաշարմունքէ յառաջ եկած պատարակելի եւ զգուելի խօսք մը սեպուի :

Խօսքերնիս չլմնցուցած սա ալ լսեմք որ, երբոր պէտք եղած երբեմն այնպիսի ազգային օգտակար ընկերութիւններու եւ երեսելի գործերու մէջ ետ մնալը շարունակութիւն կամ թէ ձեռնարկութիւն չընելը տեսնամք, ան ալ չէ թէ անմիաբանութենէն՝ հապա ցտւելով կսեմք որ, ինչպէս որ վերը ըսինք, գործի մը յաջող եւ դիւրին միջոցներուն տեղեակ չլլալէն՝ եւ որ աւելի մեծն է դանդաղութենէն է. ահա ասոնք են որ եւ իցէ յառաջագիտութեանց մէջ կամաց կամաց բալելուն պատճառները որ, հսկաքայլ դիմելու համար պէտք եղած միջոցներուն վրայօք ուրիշ անգամ կը խօսինք :

Գ ՏԵՍԱՐԱՆՔԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

ԱՐՏԱՄԵՏ ԳԻՒԴ :

Հարո-նախո-բի-նը 'ի 13 Էրե-ն ԳԵՆ :

Հնութեանցը մասին գիւղի հարաւային կողմն գերեզ-
մանատան ներքեւ՝ Արտաշիսի ձգած պարսպի մնացորդ-
ներ կերեւին մեծահատոր քարերու շարքով : Ծովահա-
յեաց վերնաքերդին վրայ ալ զանազան հնաշէն տաշուած-
ները տակաւին կնշմարուին : Իսկ բերդին ներքեւ՝ ուր որ
քիչ խորութեամբ փորուի երկաթի և խեցեղինաց կտորուանք
գուրս կուգան. որոնք հիմակուան գործածուած խեցեղինացը
եւ երկաթեղինաց բնաւ չեն նմանիր : Ճանապարհի եզեր-
քը 25 ոտնաչափ խորութեամբ բառակիւսի միապաղաղ
բար մի կայ, որուն կսեն (ծածար) : Այս քարիս համար
կառասպելեն թէ՛ Համիրամ թագուհին իւր երկայնաձիգ
մագերուն մէջը դրած պարսատկի նման վերնաքերդէն նե-
տերով մինչեւ հոս ձգածէ : Բայց շատ հաւանականէ կար-
ծել թէ՛ այս քար առաջ ճանապարհին ուղղութեան ար-
գելք է եղեր, յետոյ Համիրամ մեծագործ թագուհւոյն
հրամանաւ վերդուելուն եւ ճանապարհն շտկուելուն հա-

մար, այս առասպելս յարմարացուցած են : Գիւղիս առա-
տաջուր աղբիւրի բարերուն վրայ հին նշանագրաց մեծա-
մեծ ձեւեր կերեւին անվերժանելի : Այս այն աղբիւրն
է որ Յակոբ Մծբնացին Նոյեան Տապանի փախաբով դէպ
ի Մասիս ճանապարհորդած ժամանակին անիծիւք ցամա-
քեցոյց եւ յետոյ օրհնութեամբ բղխեցոյց . ինչպէս որ կը-
պատմուի Յայսմաւուրաց եւ հին Ճառքնորաց շատերուն
մէջ . ջուրն իւր մաքուր պարզութեանը եւ յորդութեանը
համար նշանաւոր է . իւր տակն շինուած քանիմը ջրաղաց-
ներ դարպոններէն զկնի, բազմաթիւ այգեստաններ ալ
կը թրջէ :

Այս քաղաքագիւղս առաջներն ունեցերէ չորս հատ
փսռաւոր եկեղեցի . որոնց երեքին միայն սրտստուջաւե-
րակաց մնացորդներն կ'նշմարուին տիւր խաչարձաններով .
եւ այն օժեալ հիմանց տաշածոյ պատուական բարերն հեռ-
զհեռէ յայլասեռս գերի գնալով՝ անմաքուր շինուածոց նոր
հիմունքներ բաղկացուցած են . աւաղ Թորգոմեան խորա-
նինջ բախտին՝ ելք սխաի արթննայ

Այն դիւղէս էր Տէր Յիւսկեան որդի Ս . Ստեփաննոս
վարդապետն . որ ծաղկեցաւ զարմանալի վարուց սրբու-
թեամբ Զրիստոսի 1224 թուականին միջոցները . որուն
անձին սրբութիւնը եւ աղքատասէր առատաձեռնութիւնը
գովութեամբ կ'բարոյէն շատ ձեռագիր եւ տրպագիր Յայս-
մաւուրներ եւ առանձին պատմիչներ . այս երանելոյս հայ-
րենական տանը հիմունք մինչեւ ցարդ կերեւի գիւղին մէջ
եւ կտուի (Տէր Յիւսկեան որդւոյ տուն) :

Ելքեր են նա եւ շատ երեւելի դիտնական եւ համբաւա-
ւոր անձինք այս գիւղէս . ինչպէս Տէր Պետրոս անուանի
վարժապետ քահանայն, որ 1851 . Օգոստոսի ամսոյն վախ-

Ճանեցաւ եւ իւր հայրենավաստակ աշխատութեամբն մեծ անուն եւ բարի համբաւ թողուց Վան քաղաքի ընդհանրութեանը մէջ : Եւ անկէջ ետեւ ալ շատ գիտնաւոր վարժապետներ հետ զհետէ ելնելու վրայ են՝ որոնց անձնաշուէր դաստիարակութեամբը վանայ նահանգի մեծ մասն արդէն փոքր ՚ի շատէ բարեկրթութիւն ստացած է :

Բարձր դրից վրայ ծովահայեաց գեղեցկատես եկեղեցիմը ունի Ս. Աստուածածին անուամբ, որուն հին գրչագիր Զայսմաուրի վերջաբանութիւնը՝ վարի էջերուն մէջ կը կարդացուի :

Պիւղէս երեք բառորդ հեռի (Կատեպանց) տեղն դիտելու արժանաւոր քանիմը բաներ կան. առաջին՝ Ասորեստանեայց Շամիրամ Թադուհույ հիմնարկած մեծահատոր քարերով պարեպէերն՝ որոնց վրայէն բաւական քետ մը քայլեցնելով լայնատարած եւ յոյժ հեռաւոր դաշտավայրից յորդ ջուր պատրաստեր է :

(Թահմազու այր) . որ վերէն եւ վարէն 30 ոտնաչափ բարձրութեամբ չեչաքարի սիրտն փորուածէ 30 ոտ լայնութեամբ 30 երկայնութեամբ եւ 6 բարձրութեամբ . մէջն 12 խորշ բաժանուածէ, չորս հատ ալ սիւն թողուցած կայ, լուսամուտ պատուհաններն ՚ի հիւսիս ծովուն վրայ կը նային գեղեցիկ տեսարանաւ : Այս բրածոյ այրիս համար կսեն թէ Թահմազ զուլի Պարսից խանին այս կողմերն աւերմամբ եւ գերելով արշաւած ժամանակին, բազմաթիւ խեղճ բնակչաց տեղի ապաւինի եւ փրկարան եղածէ . գուցէ թէ բուն շինութիւնն ալ նոյն վախճանին համար եղած լինի :

Այս այրիս վարի կողմն ճանապարհի եղերք 4 ոտ երկայն 2 կէս ոտ լայնութեամբ 14 տողէ բաղկացեալ բեւեռապրութիւն մը կայ, Վանայ բերդի բեւեռագրաց ճիշտ

նմանն :

Ըսոր քովի բարաժայռ ձորակի միջէն բարակ ջուրմը կը վազէ՝ որն մանաւանդ աշնանային եղանակին խիստ տժգոյն եւ աղի կ'իենի . այս ջրոյն տեղացիք (աղի աղբիւր) կ'սեն :

* * *

ԹԱՆԴԱՐԱՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Յիշատակարան Արքայի գիւղի հին

Գրչագիր Յայտարարի :

- ” Փառք անսկիզբն անուրեք աներբ եւ անժամանակ ա-
- ” նորակ եւ անբանակ գերակայ եւ համազոյ միասնական
- ” Սուրբ Երրորդութեան հաւր եւ որդոյ եւ հոգւոյն սրբ-
- ” բոյ ամէն :
- ” Ըրդ՝ այս Տաւնացոյց բովանդակ տարւոյ կարգեալ
- ” Տէր Խորայէլի խաչենցւոյ Եպիսկոպոսի 'ի խնդրոյ Զա-
- ” լալդալի տեառն խաչենցւոյ եւ Տէր Գրիգորի Եպիսկո-
- ” պոսին . որք աղաչեցին զՏէր Խորայէլ Եպիսկոպոս՝ հայե-
- ” ցեալ 'ի կորովութիւն մտաց նորա եւ 'ի ժուժկալու-
- ” թիւն բարուցն եւ նա յանձին կալաւ եւ Զան եղբորանել
- ” զաւր նահատակութեան սրբոց . որ գրեալ կայ 'ի լիա-
- ” կատար պատմութիւն . համառօտելով 'ի նմա զբանչելի
- ” կատարումն սրբոց եւ եղեալ ընդ այլ կարգեալ Յայտ-
- ” մաւուրս : Զոր կարգ ամօրն հայիւ եւ հռոմիւ միա-
- ” ջունչ եղեալ՝ անսխալ զտարին կատարեն : Բայց ոմանք
- ” յանդէտ եղեալ յակառակին այնպիսի գեղեցիկ ընթեր-

- « Երևաճոց, որ աւր ըստ աւրէ զլսելիս մեր զարհուրե-
 « ցուցանէ եւ Դողումն ցաւագին տայ անձանց մերոց »
 « Եւ արդ եթէ այնպիսեացն է արքայութիւն երկնից,
 « ապա զինչ լինիցի ծուլիցս եւ հեղգացելոցս : Այլ մի-
 « այն յայտաբանեալ յառաջ ընթացեալ յաւժար սրբ-
 « տիւ տաւնել զյիշատակ սրբոցն եւ բարեխօս առ Աս-
 « տուած զի հաշտեացի ընդ մեզ եւ բարձցէ յաշխարհէ-
 « զպատուհաս մեզաց մերոց եւ արժանի արաղցէ սրբոցն
 « փառաց հառանել 'ի Բրիստոս Յիսուս 'ի տէր մեր որում
 « փառք յաւիտեանս :
 « Արդ յայսմ դառնացեալ ժամանակիս եղիւ ցանկա-
 « յող Աստուածային Սուրբ կտակիս, որ ունի հաւաքեալ
 « յինքեան զտաւն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կա-
 « բապետին եւ այլն :
 « Օ որ գրեալ զայսպիսի դանձ Աստուածային եւ պայ-
 « ծառ լուսով լցեալ հեզահոգի եւ բարեմիտ խօճայ խա-
 « չատուրին եւ ետ գրեւ զսա 'ի յիշատակ հոգւոյ իւրոյ
 « եւ ծնողացն հաւրն առաքելին եւ այլն

ՍԲԵՐ ԼԵՐԱՆԵՐԷ

Արքայէս արշալոյսի Բագաժոռանից Դանիէլի 'ի գլխի

ՍՄԲԵՆՏ

Լս հայրենեաց նահատակ
 Վասարանդեալ ճհ կամ աստ,
 Արշակունեան բախտ փառաց
 Ահա 'ի գիրկս կայ 'ի բուն.

Մկրատ անգութ երուանդեան
Ոսկեծըղի նորին թել,
Կամի խապաւ կտրատել :

Արձգանգ Հայ լէրանց պապապետեն

Դու հայրենեաց սիրատարի

Աղիողորմ քեւ արկածք

Բայց մի յաւերժ եւ երկար.

Հրեշտակն հայոց պահապան

Խեղճ մանկեկիդ պարթեւեան

Պարծանք տոհմին արամեան

Չերժ պահեսցէ յաւիտեան :

ՄԲԵՐ

Սէր՝ արտաշէս դու մանկիկ

Հայոց միակ արեւիկ

Այն երուանդեան մեզ խաւար

Քոյ արփենւոյդ կարմիր շող

Որպէս կամի ո՛հ ծածկել

Սա իմ բազկիկս քեզ օրրան

Որ մինչ ցայս վայր տածեցար

Իմ կարմրերանգ արիւնիկս

Որ ցարդ խաղայ յերակունս

Քո ՚ի փոխան ես ձօնեմ

Չի դու բացցիս վարդ կոկոն :

Արեւ. Յ. Թօթախէան Աշակերտ

Ժողովարանի վարժարանի :

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ

Անի քաղաք նստեալ կուլայ
Չի կայ ասօղ մի լայ մի լայ.
Կսեն թէ չէ թող մնայ լայ.
Ա՛խ երբ լըսեմ մի լայ մի լայ :
Շատ ցաւերով կայրիմ տապիմ
Չի կայ մէկ մարդ հաւատարիմ
Որ խղճալոյս գայ մօտենայ
Գոնեա ըսէ մի լայ մի լայ :
Ա՛յ, Հայ տղայ խղճայ ինծի
Տես քո Անին թէ ինչպէս է
Հերիք ես լամ դու չըգթաս
Չէ՞ որ Անին շատ ափսոս է :

Ա՛խ ու վախով օրերս անցաւ
Լալով աչերըս կուրացաւ
Որք մնալն ինձ վիճակեցաւ
Բախտս բնաւ զիս մոռացաւ :
Սորուսերեմ թագաւորներ
Ժողովերեմ գլխուս բուեր.
Որ միշտ կերգեն Անին անցաւ
Անին անտէր աւերեցաւ :

Անին եմ շատ մարդաբնակ
Մնացերեմ դառն աւերակ.
Իմ լացն իմ կոծ իմ աղաղակ

Անտէր որբօցըն նըմանակ :

(Երբեմն էի շատ անըման

Հայոց քաղաք թագաւորեալ :

Այժըմ աւեր հիմնայտոակ :

Նստեալ կուլամ ես միայնակ :

Եկար տեսար դարձար կերթաս

Լալով կասես բարեաւ մընաս

Աստուած սիրես զիս չմոռնաս :

(Մասիս սարին երբ մոտենաս

Ասա իմ վեհ արարատին

Նստեր կուլայ քո խեղճ Անին

Կասէ երբ գաս աւերտիք տաս

Թէ իմ Անի հերիք է լաս :

Ա՛յ, հայ տղայ խղճայ ինծի

Տես քո Անին Թէ ինչպէս է

Հերիք ես լամ դու չըգթաս

Ղէ քո Անին շատ ափսոս է :

Յոսաբեր-Թիւն

Ողբերգութիւնդ հերիք Անի

Թշուառացեալ դու լաս քանի :

Օր մի դթած աջ անեղին

Մարդասիրեալ առ քեզ հայի

(Գան ժողովին ազդ միաբան

Քո հաստատեն քարինք անկեան :

Գեղեցկանաս շատ անըման

Յապա մի լար սիրուն Անի

Անի Անի իմ (ճան) Անի :

Ճանապարհորդ Ազգասեր Ոմ

ՔՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ո՛վ իմ գեղեցիկ բուրաստան,
 Բացուիր, բացուելոյդ ժամն է հաս
 Ահա՛ կենսատու օր դարնան ,
 Բացուիր, բացուելոյդ ժամն է հաս :
 Դրախտն Եդեմայ՝ ի քեզ կրիս,
 Փխովն, Եփրատ, Գեհովն, Տիգրիս,
 Այսքան բարեօք էր՝ ոչ բերկրիս,
 Բացուիր, բացուելոյդ ժամն է հաս :
 Քոյ է Անի, Երուսնդաշատ,
 Արմաշիր, Դուին, Արտաշատ,
 Հրաշաքերդ, Մօզ, Վաղարշապատ,
 Բացուիր, բացուելոյդ ժամն է հաս :
 Քոյ է Արարատն ախոյեան,
 Քոյ է Սուրբ Տապանն Նոյեան,
 Զարթիր, ո՛վ տունդ Արամեան,
 Զարթիր, զարթնելոյդ ժամն է հաս :
 ՄԱՏԹԻՈՍՆ է տնտես քոյ տանդ,
 Գլուխ արժանի անունդ,
 Այնեաղն լինի (զուրպանդ),
 Զարթիր, զարթնելոյդ ժամն է հաս :

ՊԵՏՐՈՍ • Տ • ՅՈՎԱԹԵԱՆ ՄԱԴԱԹԵԱՆՑ
 ՀԱՄԱԽԵՑԻ ՍԵՅԵԱԴ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԱԼ

ԳՈՎԱՍԱՆՈՒԹԻՒՆ 'Ի ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀՆ

1) այնչադիր վասպուրական
 տուն հայրենի հայկազնոյն,
 Քեզ զի՛նչ ներքող բաւ դատեսցի
 պրսակ հիւսել երբնագոյն :
 Նախ անդրանիկ տուն շինութեան
 'ի բեզ հիմնի հսկայէն,
 Եւ վայելուչ յիւրըն անուն
 զայն յորջորջէ Հայկաչէն :
 Սկիզբն առնու քաջաքանքուրն
 հայր մեր կոչիլ վեհազուն,
 Յաղթող Բելայ աղեղնաւոր
 լայնականմար հաստաբուն :
 Պատիւ փառաց յաւիտեանին
 յաղթէ կենաց անցաւոր,
 Չափ փոքրաթիւ քաջի զօրաց
 մարդիկ վանէ բիւրաւոր :
 Ունի ընդ այս ցնծալ համակ
 նախաբարբառ Հայաստան,
 Չի՛ գերծ գըտաւ Բելայ խօսից
 եւ 'ի լեզուէն պատժական :
 Ի՛նչսապրսակ փառաց պատիւ
 նուիրեսցի հայ որեարց,
 Քեզ անգրանիկ նահապետի

դրծող Հայոց սահմանաց
 Բախճան փառաց պատրաստեցեր
 տըխուր որդւոց Թորգոմեան,
 Լեզու բարբառ նախահնչիւն
 հօր ընդհանուր մարդկութեան :
 Ա՛ վասպուրական քեզ հաճեցաւ
 մեծ Թագուհին Շամիրամ,
 Շրքեղազարդ կանգնել բընակ
 տեղի քաղաք ամարան :
 Կանանչազարդ մարգագետինքդ
 Լաղբերակունքդ կաթնորակ,
 Յափշտակեաց սիրտ Ասորոյն
 աղապատել շարունակ :
 Հաճոյ գըտաւ եւ յաչս վանայ
 մեր նախահօրն քո հովիտ,
 Ճաղկապըսակ կանանչագեղ
 տեսիլ չքնաղ քո դաշտիդ :
 Ձեռն արկանէ զՇամիրամայն
 տայ նորոգել ըզ հիմնարկ ,
 Վան իւր անուամբ կարդայ քաղաք
 ինքեան յաւերժ յիշատակ :
 Պըսակ կրկին քեզ հիւսեցաւ
 վասպուրական տենչալի
 Արրող բազմաց նախնի անուանց
 յոյժ վայելուչ բաղձալի :
 Ծորանք աղբերոց քո բարեհամ
 հոտով սիրոյ հայրենեաց ,
 Արշակունւոյն վառեալ 'ի սէր
 զքեզ նորոգէ 'ի հիմանց :

Ազգի ազգի պատիւ բանի՝
 հիւսած բանից տողեսցի
 Յոր զօրութիւն գրչիս չեհաս
 այժմ այսու բաւեսցի :

Ա. Գ. Աշակերտ. Ժողովարար. Վ :

ՀԱՆՔԵԼՈՒՄ :

Ի կենդանութեան սակաւ գամ 'ի պէտ.
 մահուամբ բարձրանամ արեւոյն 'ի դէպ :
 Հասակաւորեալ եռամեայ աւ լուրբ :
 խոտեղէնքն ամէն առնեմ ինձ տը րուպ :
 Կորովոյն հայկայ խիտալ ըզլա հան.
 ըսպասեալ մնամ արեւոյն ծագ ման :
 Խոպոպ դեղձանեակ շուրջ զինեւ ար կեալ :
 բիւրաւոր որդւոցս տամ հանգըստա նալ :
 Վահանն իմ բոլոր գոյն ոսկւոյ փայլ լի :
 մեծադին ակամբ յեռեալ մարգար տի :

* * *

ԱՆՁՆԱՆՈՒՆԻ
ԳՈՐԾԱԿԱԼԻՔ ԸՆԳԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ .

ՎԱՆ , Մկրտիչ Տ . Առօմեան 'ի զրանոցի վասպուրական
Արծուոյն :

ՎԱԳԼԻՐՇԱՊԱՏ , Գրեգոր Ազա Տ . Մկրտիչեան Մա-
լենցով :

ԿԱՐԻՆ , Խաչատուր Խան Տ , Երեւանեաց եւ միանգամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ՏՓԽԻՍ . շքեղարուեստ Յովհաննէս Ազա Բարսեան . Բա-
թանեանց :

ՏՐԱՊԷՐՈՆ . Ըղածան Ազա Յովհաննէսեան :

ՊՕԼԻՍ . Պ . Յակովբ Աղուանեան վանցի 'ի Պալթաճի Խան
ԶՄԻՒՌԻՆ . Պ . Սարգիս Տէր Մարգարեան , վանանդեցւոյ ,

ԲԵՐԻԱ . Յովհաննէս Ազա Մխարբեան :

ՍԱԼԱՄԱՏԱՏ . Յակովբ Միրզայեան Մէլիք Յակովբեանց ,
միանգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :

ԴԻՆ ՏՐԱԲԿԱՆ ԸՆԳԵՐԱԳՐՈՒԹԵԱՆՆ ԿԱՆԻՒԿ

Ի Վան , 'ի Կարին , 'ի Մուշ , 'ի Բաղէշ , 'ի Տրապիզոն 2 ու
կէս Օսմանցի քսան զուրուշնոց արծաթ Մէճիաթի :

Ի Պոլիս , 'ի Զմիւռին , 'ի Բերկա , երեք արծաթ քսան
զուրուշնոց Մէճիաթի :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան , այսինքն 'ի Տփլիս ,
Լէզքսանդրպոլ , 'ի Վաղարշապատ 'ի Դավրէժ եւ այլն , չորս
արծաթ Մանեթ :

Գին միոյ տեսարակի 7 զուրուշ : Ճանապարհին ծախքը
Խմբանդիրը պիտի վճարի :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԻՍ ԱՍՏՈՒԱՃՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑ ԱՇԼԵՆ ՀԱՐՑ

Յովհան Մանդակունի կարգաւորէ կարգոյ Հայաս-

տանեայց Սուրբ Եկեղեցւոյ : 23

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԱՆԱՇԻՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ

Ա. Աշոտ Բաղրապատի աղաբնակէն Եւ պանծալի

Թագաւոր Հայոց : 28

ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊապՏոմարի-ն անկիրթ զաւակի : 33

Թեւորչա՛ր Տե՛ն սխալե՛ա Տեր աղօթե՛ն Դերայ եղա՛ծ

անժառանգութեան կարծիքը : 34

ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

Արամեայ Գիւղ : 39

ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Յիշատակարան Արամեայ գիւղի հին գրչագիր Յայա-

Տառարի : 42

Սյբապ ժապարակելի Արարչէն Արգալիւնի Թագա՛ծա-

ռանգ Տանկիկն 'ի գրի : 43

Ողբերգութիւն Անի խաչա՛րի : 45

Քնար Հայաստանի : 47

Գովառանդութիւն 'ի Աստուծոյն աղաբնակ : 48

Հանելուկ : 50

